



ԲԱԶՄԱՎԷՊ

ԺԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 3.

1856

ՓԵՏՐՈՒԱՐ 1.

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՆԿԱՐԱԳԻՐ

Բարեկամութիւն :

Մեր էութիւն անբաւականութիւնն է որ ծնանել կու տայ զբարեկամութիւնը, և բարեկամութեան անբաւականութիւնն է որ զանիկայ կորսնցընել կու տայ :

Երբ որ մէկը մինակ է, կը զգայ իրեն խեղճութիւնը, կը զգայ որ ապաւինի մը կարօտ է . իր ախորժակներուն պաշտպան մը, իր զուարճութիւններուն ու իր նեղութիւններուն ընկեր մը կը փնտրուէ . կ'ուզէ մարդ մը, որուն սիրտն ու մտածութիւնը կարենայ ինքը գրաւել : Եւս առթիւս մէջ՝ բարեկամութիւնը աշխարհքիս քաղցրագոյն բանը կ'երեւայ մեզի : Բայց այս ցանկացած փափաքին հասնելուն պէս, կը փոխէ մարդ իրեն մտածութիւնը :

Բարեք մը որ հեռուէն կը տեսնուի, մէկէն 'ի սկզբան մեր փափաքները իրեն կը քաշէ . բայց երբոր ձեռք ձգելու ըլլաս, կը զգաս անոր ոչնչութիւնը :

Մեր հոգին, որուն տեսութիւնը այն բարեքը կը բռնէր իրեն հեռաւորութեամբ, չկրնար հոն հանգչիլ, որով հետեւ իր տեսութիւնը դէպ 'ի աւելի անդին կ'երթայ . ասանկ ալ բարեկամութիւնը, որ հեռուանց բոլոր մեր աւերակալութիւնները գոհ կ'ընէր, մտանց գոհ չընէր զանոնք . չլեցընէր այն դատարկ տեղը, զորն որ լեցընելու խոտացեր էր . այնպիսի պիտոյքներ կը թողու մեզի, որ մեր միտքը կը վերացընէն ու զմեզ դէպ 'ի ուրիշ բարեքներու դիմել կու տան :

Եւսն ատեն ինքզինքը կը մոռնայ մարդ, կը խստանայ, ու իբրեւ հարկ մը կը պահանջէ այն հաճութիւնները, զորոնք առաջ իբրեւ պարգև մը ընդունէր : Եւսիկայ մարդկանց բնաւորութիւնն է որ կամաց կամաց կը տիրանան այն շնորհներուն ալ, զորոնք կը վայելն . երկայն վայելքը բնականապէս

կը վարժեցընէ զիրենք վայլած բաներնին իբրեւ իրենցը համարելու . ասանկով վարժութիւնը կը համոզէ զիրենք որ բնական իրաւունք մը ունին իրենց բարեկամներուն կամացը վրայ : Այս գէն իբրեւ իշխանութեամբ կառավարել զանոնք . երբոր այս պահանջմունքները փոփոխակի են , ինչպէս որ շատ անգամ կը տեսնենք , անձնասիրութիւնը կը զրգուռի ու երկու կողմերէն ալ կը խօսի , դառնութիւն , պաղութիւն ու ծանր կշտամբանքներ , և այլն , կը պատճառէ :

Երանկով երբեմն փոփոխակի իրարու վրայ այնպիսի պակասութիւններ կը գտնեն , զորոնք առաջ կը ծածկէին . կամ այնպիսի կիրքերու մէջ կ'իյնան , որոնք ալ զգուշի կ'ընեն իրենց զբարեկամութիւնը , ինչպէս որ սաստիկ հիւանդութիւնները զգուշի կ'ընեն ամենէն աւելի քաղցր զուարճութիւնները :

Եւսպէս ամենէն աւելի յարմար չեն հաստատուն բարեկամութեան մը անոնք , որ ամէն բանի մէջ ծայրը կ'անցնին : Բարեկամութիւնը չըլլար մէկու մը վրայ անանկ վառվռուն ու անանկ ամուր , ինչպէս երկչոտ ու լուրջ բնաւորութեամբ մարդկանց մէջ , որոնց ըզգաստ հոգին կը ճանձնայ զառաքինութիւնը . որովհետեւ բարեկամութիւնը կը սփոփէ անոնց՝ գաղտնեաց ծանրութենէն ու լուութենէն ճնշուած սրտերը , կը լայնէ կ'ընդարձակէ անոնց միտքը , զանոնք աւելի վստահացող ու աւելի աշխոյժ կ'ընէ , անոնց ծածուկ ըզբօսանացը , գործողութիւններուն ու զուարճութիւններուն հետ կը խառնուի . և բոլոր անոնց կենաց հոգին կ'ըլլայ :

Երիտասարդներն ալ նմանապէս սաստիկ զգայուն ու իրենք զիրենք վստահացող են . բայց իրենց վառվռուն կիրքերը կը վերացընէ զիրենք ու փոփոխամիտ կ'ընէ : Օգայունութիւնն ու վստահութիւնը սովորական են ծերոց մէջ . բայց հարկը զիրենք իրարու կը մօտեցընէ , ու բանն է անոնց իրարու հետ ունեցած կապը : Եւջիններուն

սէրը աւելի փափուկ է . իսկ վերջիններուն սէրը աւելի հաստատուն է :

Բարեկամութեան պարտքը այնչափ ընդարձակ է , որչափ որ չկարծուիր . մենք մեր բարեկամին թշուառութիւններուն մէջ իրեն ետեւէն կ'երթանք , բայց իր տկարութիւններուն մէջ կը լքանենք զինքը . ասով մենք քան զինքը աւելի տկար կ'ըլլանք :

Այլ որ կ'ուզէ ծածկել այնպիսի բարեկամներ ունենալը , որոնց թերութիւնները խոստովանելու բռնադատուած է , իր նուաստութիւնը կը ցուցընէ : Այլ որ ազատ ես դուն այս ախտերէն , ուրեմն յայտնէ զքեզ համարձակ բերնով . տարածէ քու պաշտպանութիւնդ թշուառաց պակասութիւններուն վրայ . ասանկ ընելով՝ որ և իցէ կերպով մը զքեզ վտանգի մէջ չես դնէր , բայց մեծ ու վեհ մարդիկները միայն կրնան իրենք զիրենք ասանկ ցուցընել : Տկարները իրար զիրար կ'ուրանան , վատութեամբ կը զոհեն զիրենք հասարակաց դատմունքներուն , որոնք շատ անգամ անիրաւ են , չեն կրնար կերպով մը դէմ կենալ անոնց :

ՎՕՎՆԱՐԿ

ԱՌԱԿ

Արտաւն և Ձագ Իւր :

Ագուան ժողովեաց զձագս իւր , և նրա տեաց զնոսա՝ ասելով . Որդեակք իմ , մի լը իք . պատրաստք եղերուք ի մարդկանէ , ևս առաւել ի յայն ժամն՝ որ խոնարհին ի քար առնելն : Եւ ասեն ձագքն նորա . Ո՛վ մայր մեր , զինչ արեսցուք թէ յառաջագոյն մարդն առեալ լինի զքարն ի ձեռն իւր : Ասէ մայրն . Այժմ գիտացի որ աւրելոց էք դուք :

ՎԵ ԴԵՅ